

Եթէ հաւը աքաղաղի պէս կանչէ՝ տնեցիներէից մինը մեռնելու է. առաջն առնելու համար հաւը դռան շէմքում մորթում են:

Եթէ գիշերը հաւը կամ աքաղաղը անժամանակ կանչեն, ալդ նշան է, որ մի չարիք պիտի գայ. իսկոյն մի կրակ են շպռտում դէպի հաւաքունը, որ չարը հաւերին գնայ:

Եթէ անցորդի գլխի վրայով ագռաւը կռռայ, սա մի վատ բան է գուշակում և բարձր ձայնով կանչում է. «Ա՛քաշ, խէ՛ր. ա՛ քաշ, խէ՛ր»:

Եթէ շունը ոռնայ՝ տնեցիներից մին կը մեռնի:

Եթէ կատուն երեսը լուայ, կամ թաթը ականջի տակով անցկացնէ, հիւր կը գայ:

Եթէ կատուն օտերով չանգռոտէ գետինը՝ անձրև կը գայ:

Եթէ նապաստակ պատահի, անյաջողութեան նշան է, իսկ եթէ աղուէս՝ յաջողութեան:

Ժ. Գ Լ Ո Ւ Խ

## ՄՆՈՏԻԱՊԱԾՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Աչքով տալ.—Կան մարդիկ, որոնք չար աչք ունին և նկարող են աչքով տալ: Եթէ նրանք հաւանում են մի բանի և կամ նախանձում են, իսկոյն աչքով են տալիս և իրը իսկոյն և եթ տրաքւում է:

Եւ որպէսզի աչք չտան, դիմում են հետեւեալ միջոցների.

ա.—Բռշնի ծառը տնկում են բակում, արտում, պարտիզում և այլն:

բ.—Բռշնի փայտի մի փոքրիկ կտոր, ուղտի բրդի և աչքահալունքի հետ կարում և կապում են օրօրոցից, ձիու վզից և այլն:

գ.—Մի ամանով ջրի մէջ մի ձու են ձգում և դնում իրի մօտը. աչք տալիս ձուն տրաքւում է:

դ. Եզի, եղջերուի կամ արծեամի գանգ ցցի վրայ. անց-կացրած խփում են տան, արտի, ալգու մօտ:

ե.—Յայտնի, աչք տուող մարդկանց պատահելիս, մի քարի վրայ թքնում են և շուռ տալիս:

զ.—Ոսկի բղուճի կաշին հանում ուղտի մազով լցնում, կարում են երեսալի ուսին:

է.—Երեսալի օրօրոցից և կամ շորերից կախում են աչքահուլունքներ:

Պատմում էին, թէ հայր ու որդի անցնում էին վար անողների կողքից: Հայրն ասում է. «Ի՞նչ լաւ եղ է», և ըս-պասում է, որ եղը իսկոյն տրաքուի Սակայն ոչինչ չի պա-տահում: Զարմացած ուղարկում է որդուն, որ տեսնի, թէ եզի սամին բռնո՞ւց է: Որդին գնում տեսնում է, որ լիբա-ւի բռնուց է և հօր պատուէրով փոխում է: Անմիջապէս եղը տրաքում է:

«Տեսա՞ր որդի, բռնին էր, որ արգելում էր», ասում է հայրը:

—Ի՞նչ լաւ աչք ունիս, հայրիկ, ասում է որդին, և իսկոյն հօր աչքն էլ տրաքում է:

Մարմնախաղ.—Եթէ աջ ձեռք քոր գայ, փող կ'ստա-նայ, իսկ եթէ ձախը քոր գայ՝ փող կը ծախսէ:

Եթէ կզակը քոր գայ՝ հիւր կը գայ:

Եթէ մի անգամ փունջտան՝ անյաջողութեան նշան է, իսկ եթէ զոյգ՝ յաջողութեան:

Եթէ լօրանջելիս չխաչակնքուին, սատանան կը մտնի բերանը:

Եթէ աջ աչքը խաղայ, յաջողութիւն է գալու, իսկ եթէ ձախը՝ ձախորդութիւն:

Եթէ ականջը կանչէ՝ մինը նրան լիշել է: Եւ որպէս զի իմանան, թէ ո՞վ է լիշողը, տալիս են ծանօթների անուն-ները, ում անուան ժամանակ որ ձայնը կտրուեց, նա է:

Եթէ աջ ականջը քոր գայ՝ միւս օրը լաւ եղանակ կ'անի, իսկ եթէ ձախ՝ անձրև կը գայ:

Եթէ մինի ոտի տակը քոր գայ՝ ճանապարհ կը գնայ:

Սեղան.—Եթէ թոնրից դուրս եկած առաջին հացը ուտեն՝ ամուսինը կը մեռնի:

Եթէ հացը գետից անցկացնեն՝ կը քաղցրացնեն:

Եթէ հաց կտրելիս մի կտոր թռչի ընկնի միւս կողմը, յաջորդ տարին սով կը լինի:

Եթէ ալրած հաց ուտեն՝ գալլից չեն վախենայ:

Եթէ մսի ճիւղ ուտեն՝ մազերը կ'երկարին:

Եթէ ոչխարի ուղեղ ուտեն՝ խելքը կը շտտանայ:

Եթէ երիտասարդը կաթսալի տակը սրբէ՝ հարսանիքի օրը ձիւն կը գայ:

Եթէ ափսէն մաքուր սրբեն՝ կնոջ երեսը գեղեցիկ կը լինի, իսկ եթէ չսրբեն՝ չեչոտ կը լինի:

Ով որ մանկութեան ժամանակ աղջկայ հետ միասին մի ափսէի միջից ուտի, գող կը լինի:

Եթէ մթին տեղը ջուր խմեն՝ քաջքերը կը կոփեն: Եւ եթէ ստիպուած են խմելու, կանգնում են շէմքի վրայ և մի ձեռքը դնելով պարանոցի ետևը՝ խմում:

Եթէ երեկոյեան սփռոցը թափ տան՝ տան բարաքեաթը կը կորչի:

Թոշոյններ.—Եթէ գիշերը աքաղաղները կանչեն, մարդիկ կը խաչակնքեն երեսները և կ'ասեն. Օրհնեալ է Աստուած, որովհետեւ նախ երկնքի աքաղաղն է կանչում և ապա սրանք. և կամ մարդկանց պահապան հրեշտակները, որ մարդկանց քնելուց յետոյ համբառնում են երկինք, նորից վերադառնում են և միայն աքաղաղներն են տեսնում նրանց:

Եթէ երեխան հաւի գլուխ ուտէ՝ ծնողներից մինը կը վախճանուի:

Եթէ հաւի սիրտը հում-հում կուչ տան՝ սրտոտ կը դառնան:

Եթէ ձուի կեղևը ալրեն՝ հաւը ձուից կը կտրուի:

Եթէ հաւի փետուրը ալրեն՝ անձրև կը գայ:

Հաւը թուխս դնելիս շարում են հաւկիթները, մի ձեռում բռնում հաւը, միւսում մի հաւկիթ։ Յետոյ այս մի հաւկիթը երեք անգամ պտտեցնում են բոլոր հաւկիթների շուրջը և դնում մէջ տեղը, և հաւը թուխս նստեցնում ասելով։

«Վո՛չխարը կէայ սրերաւը,  
Տաւարը կէայ քուլերաւը,  
Ըծերը կէայ հէօլերաւը,  
Դու էլ կէաս քու ծտերաւը»։

և կամ՝

«Լոխ ծակ,  
Մինը լակ»։

Գորտ.— Եթէ գորտ տեսնեն և ձեռների ու ոտների վրայ չթքնեն, ձեռների վրայ գորտանում կը բռնանի։

Գայլ.— Եթէ արևով անձրև գալ, գայլերը կը ծնին։

Օձ.— Եթէ սխտոր ցանեն բակում և կամ կախ տան դռնից կամ առաստաղից, օձերը չեն կարող մօտենալ։

Եթէ սոխ դնեն գրպաններում և կամ սխտոր քսեն տրեխներին, օձերը կը փախչեն։

Եթէ սպանեն օձը, մինչև արիւստի գուրս գալը չի սատկիլ։

Եթէ սպանած օձը գլուխը գուրս հանած չթաղեն, կը ողջանայ։

Բոյսեր.— Եթէ սոխի կճեւլը խնկի հետ կրակը ձգեն, արքայութեան հոտը կը բուրէ։

Եթէ գալար բոյսը ալրեն, անձրև կը գալ։

Եթէ մինը ընկուզենի տնկի, 7 տարուց լետոյ կը մեռնի։

Եթէ չիք-չորեքշաբթի օրը պտուղ չբերող ծառերին երեք անգամ առանց խօսելու խփեն, պտուղ կը տալ։

Կարկուտ.— Եթէ մի պառաւ և կամ մի ծեր սուրբ Սարգսի պասի երկուշաբթի օրը ցորեն աղանձէ և կարկուտի ժամանակ շաղ տալ, խնդիւն կարկուտը կը կտրի։

Եթէ վառեն Տեառնընդառաջի մոմերը, կամ շամփուրները խաչաձև դնեն, քսկարենքը (եռտանին) հակառակ դարձնեն, գատկի ձուի կճեպը և կամ նոյն օրուայ մատաղի ոսկորները դռանը դնեն, կարկուտը կը կտրի:

Եթէ պղինձ կամ կաւէ ամանի կտորներ թակեն և կամ հրացաններ արձակեն, կարկուտը անձրևի կը փոխուի:

Վախ.— Վախեցողը բժշկուելու նպատակով դիմում է հետևեալ միջոցներին.

1) Վախեցնողի բռից կամ փէշից ջուր է խմում:

2) Մի քանի, որոշ գերեզմանների վրայ կան փոքրիկ փոսեր, ինչպէս օրինակ Ծովատեղ գիւղի գերեզմանատնում մի փոքրիկ երեխայի և կամ Նինգի գիւղի վախ բռնող Տէր Առաքելի հօր՝ նոյնպէս վախ բռնող քահանայի գերեզմանը և այլն: Վախեցողին բերում կուացնում են այսպիսի մի փոսի վրայ և ծոծրակին այնպէս ջուր ածում, որ փոսի մէջ լցուի, լետոյ վախեցողը չոքում և խմում է այդ փոսի միջի ջրից:

3) Մի կաւէ ամանով ջուր դնում են մի կիրակմուտք օր մի որևէ, առանց հաղորդութեան մեռած՝ ննջեցեալի գերեզմանի վրայ և հետևեալ օրը մի քանի ուսկ խմում այդ ջրից և ամանը կոտրում:

4) Արջի լեղի են խմում:

5) Ննջեցեալից վախեցողին տանում են այն ննջեցեալի գերեզմանի մօտ, որից վախեցել է, վերցնում են գերեզմանաքարը, մի քիչ քանդում հողը, մի հաւկիթ դնում և մի մեխով ծակում ու նորից ծածկում: Ապա այդ գերեզմանաքարի վրայ մի քիչ ջուր ածում և խմեցնում ու լանկարծ ջրի ամանը կոտրում:

6) Եթէ ննջեցեալից են վախեցել, այգը կատարելիս լանկարծ հող են ածում վախեցածի պարանոցին:

Ե. Լալայեան

